

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Ռաֆիկ Պետրոսյանի, Արտակ Դավթյանի, Վարդան Բոստանջյանի, Վիկտոր Դալլաքյանի, Արամ Սաֆարյանի, Արայիկ Հովհաննիսյանի և Համլետ Հարությունյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ առաջարկում ենք՝

1. 1-ին և 3-րդ հոդվածներում «կետի» և «ենթակետի» բառերը համապատասխանաբար փոխարինել «մասի» և «կետի» բառերով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

2. 3-րդ հոդվածի մասերի համարակարգումը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված

ենթակետերի: Հողվածները, մասերը և կետերը համարակալվում են արաբական թվանշաններով: Հողվածի ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով: Հողվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետով, իսկ հողվածների կետերի համարները՝ փակագծերով:

3. 4-րդ հոդվածը «նրա նկատմամբ չի կայացվել մեղադրական դատավճիռ» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «կամ չի կայացվել անմեղության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու որոշում» բառերով: Նշենք, որ նշված որոշման դեպքում ևս ձերբակալումը և կալանավորումը համարվում են օրինական և չեն կարող բացակայությունը հարգելի ճանաչելու պայման հանդիսանալ: Տվյալ դեպքում աշխատանքային օրենսդրությանը հղում կատարելը նպատակահարմար չէ, քանի որ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով այդ հարցը նշված ասպեկտներով կանոնակարգված չէ:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**ՕՐԵՆՔԸ****«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին**

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության (2002 թվականի փետրվարի 20-ի, ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին կետի ժը.1) ենթակետի «հեռարձակման կարգավորող անկախ մարմնի» բառերը փոխարինել «հեռարձակման անկախ կարգավորող մարմնի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Գլխադասային հանձնաժողովի եզրակացությամբ Ազգային ժողովի որոշման նախագիծը ընդգրկվում է հերթական նստաշրջանի օրակարգում լրացումներ կատարելու մասին նախագծում, իսկ հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկվելու դեպքում, նաեւ՝ առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգի նախագծում»:

Հոդված 3. Օրենքի 97-րդ հոդվածի 1-ին կետում՝

1) 3-րդ պարբերության «կարգավորող անկախ մարմնի» բառերը փոխարինել «անկախ կարգավորող մարմնի» բառերով,

2) 8-րդ պարբերության «Հայաստանի Հանրապետություն կառավարության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերով,

3) 19-րդ պարբերության գ) ենթակետի «Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի մասին» բառերը փոխարինել «Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» բառերով,

4) 19-րդ պարբերության «գ» ենթակետի «Եվրախորհրդի» բառը հանել:

Հոդված 4. Օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ մասի ա.2) կետը «կալանքը» բառից հետո լրացնել «եւ նրա նկատմամբ չի կայացվել մեղադրական դատավճիռ»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրինագիծը կոչված է հստակեցնելու ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգի մի շարք դրույթներ եւ վերացնելու դրա որոշ անճշտություններ: Մասնավորապես, դա վերաբերում է Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի կողմից ներկայացված եւ հերթական նստաշրջանի օրակարգում լրացումներ կատարելու մասին նախագծում արդեն իսկ ընդգրկված որոշման նախագիծը առաջիկա չորսօրյա նիստերի նախագծում ընդգրկելուն: «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ նախադասությամբ նախկին ձևակերպման մեջ հստակ չէր երևում, որ որոշման նախագիծը չորսօրյա նիստերի օրակարգ է մտնում միայն այն նստաշրջանի օրակարգ մտնելուց հետո: Դա տարբերեցման տեղիք էր տալիս:

Օրինագծում ճշգրտվել են «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 97-րդ հոդվածում ոչ ճիշտ վերտառություններով հիշատակված մեկ ակտի եւ Եվրոպական կոնվենցիայի անվանումները:

Բացի այդ, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ կետի «ա.2)» ենթակետի ձևակերպմամբ քվեարկությունից պատգամավորի բացակայությունը համարվում է հարգելի, երբ նա ձերբակալվել էր կամ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել էր կալանքը: Այս ձևակերպումը հակասում էր աշխատանքային օրենսդրության ընդհանուր սկզբունքներին: Ստացվում էր, որ եթե պատգամավորի ձերբակալումը կամ կալանքի տակ գտնվելը թեկուզեւ օրինական է եւ նրա նկատմամբ հետագայում մեղադրական դատավճիռ է կայացվել, ապա նրա բացակայությունը դարձյալ պետք է հարգելի համարել եւ նրան վճարել աշխատավարձ նաեւ այդ ժամկետների համար: Սա զուտ իրավաբանական անհեթեթություն էր, որը վերացվել է նոր ձևակերպմամբ: